

ատեն օդ առնելու համար երբոր նա-  
ւուն վրայ կեւէն՝ իրենք զիրենք ծովը  
կրնետեն եղեր որ փախչին խալըսին .  
նաւապետը կիմանայ թէ անոնցմէ  
մէկն ալ միտքը դրեր է որ ծովը նե-  
տուի, կրմտածէ ասոր այնպիսի պա-  
տիժ մը տալու որ ուրիշներուն ալ օրի-  
նակ ըլլայ, ու ալ չփախչին : Ահհրամէ  
որ ասոր թւերուն տակէն չուան մը  
կապեն, ու ջրին մէջ ընկղմեն : Այ-  
րան քիչ մը ատեն կանցնի, ասիկայ  
սուր ձայնով մը ջրին տակէն կը պո-  
ռայ . առջի բերան նաւուն մէջի մար-  
դիկը կարծեն թէ խղճուելու վախէն  
է, բայց շատ չանցնիր՝ կը տեսնեն որ  
իջած տեղին ջուրը կը սկսի կարմրիլ .  
շուտ մը չուանը վեր կը բաշեն կը տես-  
նեն որ մէկ շանաձուկ մը, որ նաւին  
ետէն կուգայ եղեր, խածեր երկու  
կտոր ըրեր է ան խեղճը :

Ատենով Աթամար անունով ծովու  
աւազակ մը կայ եղեր . երկար ատեն  
ասոր ետէն իյնալէն ետքը՝ վերջա-  
պէս օր մը կը բռնեն, ու նաւուն ե-  
տեւի կողմէն ծովը կրնետեն որ խղ-  
ճուի : Այնպիսի վերջի ուժը թափե-  
լով կը սկսի նաւուն ետէն լողալ, ու  
կը ջնայ որ ղեկը՝ բռնէ : Հագիւ  
թէ բռնելու վրայ կը լլայ, անդիէն  
երկու հատ ահագին շանաձկներ ա-  
նոր վրայ կը վազեն : Աւաւարները  
նաւուն ետեւի կողմը ժողովուած՝ եր-  
բոր աս կը տեսնեն, կը սկսին ուրա-  
խութեամբ ցատքըտել ու կանչու-  
տել, ըսելով թէ մեր ուզածն ալ ան  
էր որ ատանկ դժնդակ մահով մեռնի  
աւազակը : Այնպիսի Աթամար իր  
գլխուն եկած փորձանքը, կը սկսի ծո-  
վուն ալիքը փրփրացընել ու շփոթել .  
բայց անօգուտ . շանաձկները առջի  
բերան քիչ մը կը վախնան, բայց ետքը  
կը մօտենան իրեն . ինքը ղեկը ակ-  
ռաներովը կը խաժնէ ու կը պոռայ .  
ան միջոցին մէկ շանաձուկը աս խեղ-  
ճին ոտքին մէկը կը խաժնէ կը փրցընէ,  
մէկալ շանաձուկն ալ կուգայ մէկալ

ոտքը կը փրցընէ . ետքը երկուքը մէ-  
կէն բերանին բացած կատաղաբար  
կը արձըկին վրան, ու կառնեն կը տա-  
նին ծովուն տակը, բոլոր ջուրը արիւն  
լուայ ընելով :

#### ԴԱՍՏԻԱՎԱԿՈՒԹԻՒՆ

(Ժ) Է ԿՂՈՅ ԿԱՆՈՒՆ ԴԱՍՏԻԱՐԱՅԷ ԴՎ ԿԻՊԻ  
ԸԼԱՅ :

ԱՐԴՈՒՍ կը թուի տալու ճամ-  
բան՝ պարտէզ մը շտկելու և զարդա-  
րելու կրնմանի . երբոր մէկն ուզէ իր  
պարտէզը աղուորցընել, գուարձալի  
կերպով զարդարել, ինչ կրնէ . ամէն  
աղէկ ծառերուն ու բոյսերուն նոր  
տունկերը կը ժողովէ, ու զատ կը տըն-  
կէ, որ իր ուզած ձևովը մեծնան ու  
նոր գեղեցկութեամբ ծաղկի իր պար-  
տէզը : Այսպէս ալ երբոր ազգ մը  
կուզես աւելի աղէկ կարգի բերել, ու  
դաստիարակութեմբ գեղեցիկ պտուղ-  
ներովը զարդարել, պէտք է որ ոչ  
այնչափ մեծերուն վրայ աշխատիս,  
որչափ ջանաս որ տղաքը աղէկ ճամ-  
բով մեծցընես : Իսկ թէ որովհետեւ  
մարդս պարտէզի ծառերէն աս տար-  
բերութիւնս ալ ունի որ խելքի տէր՝  
խօսք հասկըցող է, երբոր պզտիկնե-  
րը շիտակ կը թուի թեմբ կը մեծնան՝  
մեծերն ալ կրնան խելք սորվիլ ու ի-  
րենք զիրենք շտկել . որ աս բանս մեծ-  
ցած ծառերը չեն կրնար ընել . մէկ  
խօսքով, յայտնի է որ ազգին լաւու-  
թիւնը կը սկսի տղոց կը թուի թեմէն :

Իայց ինչպէս պիտի տրուի աս գե-  
ղեցիկ կը թուի թիւնը : Այնպիսի թէ  
կարելի ըլլար, ու ամէն տեղ աղէկ  
դաստիարակներ գտնուէին, որ ծնողք  
իրենց տղաքը՝ երկու իրեք տարուան  
եղած չեղած, անոնց յանձնէին (ինչ-  
պէս ըսինք օրագրիս 2 թուին 23 ե-  
րեսը, և ուրիշ անգամ ալ պիտի ը-  
սենք) : Այնպիսի որովհետեւ առ այժմ  
հարկ է որ աս մեծ ու ամենահար-  
կաւոր պարտքը մնայ ծնողաց վրայ ,

անոնց ձեռքն է ազգերնիս բարեբաղդ կամ դժբաղդ ընելը : Դժն մարդ կրփափաքի որ ազգերնիս ծաղկի քաղաքականութեամբ , գիտութեամբ ու ամէն տեսակ առաքինութեամբ . և ահա աս բաներս առջի դիւրացրնող կամ դժուարացրնողները ծնողք են : Գուցէ հիմա ծնողք լսելով թէ ազգը ամէն կատարելութիւններով զարդարողը իրենք պիտի ըլլան , փափաքին իմանալ թէ ինչպէս կրլայ աս բանս . իրենք ինչպէս կըրնան պատճառ ըլլալ ազգին չարեացը կամ բարեացը . նախ աս հարցընենք թէ մէկ հայր մը կամ մայր մը ինչ պէտք է որ ընէ իր տղուն : — Եկէ յայտնի բան չկայ կրսեն . բնական է որ իրենց տղաքը կըսիրեն , անոնց բարիքը կուզեն , և կըջանան որ երջանիկ ընեն զիրենք : — Եւ առաջիկ , ճշմարիտ ու նաեւ դիւրին պատասխան . անանկ որ ամէն ծնողք հարցընողին մէկէն 'ի մէկ աս կըսէ : Եւնք ալ պատասխան կուտանք թէ յիրաւի ատ է տղայ կըթելուն շիտակ ճամբան . սիրել զորդին , անոր բարիքն ուզել , և ամէն կերպով ջանալ որ երջանիկ ըլլայ որդին . բանը ան է որ իրենք ինչ պատասխան որ տուին՝ ճիշդ կատարեն . ան ատենը , թէ որ տղաքը բնութեամբ գէշ են , ու մեծնալէն ետեւ չար օրինակներու կըհետեւին , ծնողքը չէ թէ միայն յանցանք չունին , այլ և մեծամեծ վարձքերու արժանի են՝ որ պիտի առնուն Եւտուծմէ . որդիքն ալ որ իրենց ծնողաց գուժը ոտքի տակ առած՝ վերջէն կըչարանան , իրենց չարութեան պատիժը պիտի քաշեն :

Եւայց հոս քիչ մը քննենք թէ արդեօք ամէն ծնողք աս պատասխան տուած պարտքերնին կըկատարեն թէ չէ : Եւրդեօք կան այնպիսի ծնողք որ չսիրեն իրենց որդին . աս բանս անկարելի կերևնայ : Եւայց ինչով կըյայտնեն իրենց սէրը : Ոմանք , քանի որ պզտիկ է իրենց տղան՝ կըգրկեն , կըփայփայեն , անոր ամէն շարժումները՝

ամէն ըրածը կըգովեն , կըջանան որ ամենեւին սիրտը չկտրեն , ամէն ուզածը մէկէն կատարեն , և այլն : Եւոր սկսի տղուն խելքը բացուիլ ու աղէկը գէշը ճանչնալ , իրենք՝ դեռ տղայ է ըսելով՝ անոր ըրած անկարգութիւնները բանի տեղ չեն սեպեր , շատ անգամ երեսն 'ի վեր ալ կըխընտան տղայական սխալմունքներուն վրայ . և որովհետեւ տղուն բարիքը կուզեն , և կըջանան զինքը երջանիկ ընել , անոր համար կընային որ մէկ խօսքը երկուք չընեն . և թէ որ հարուստ են , ուրիշներուն ալ՝ ծառաներուն ալ կապըսպրեն տղուն առջև որ չըլլայ թէ անոնք տղուն կամքին դէմ բան մը ընեն . մէկ խօսքով , ամէն ձեռքերնէն եկածը կընեն որ տղան հանգիստ ապրի , ամէն ուզածը ըլլայ , ուրախ կեանք անցընէ : Եւ ճամբով տղայ մեծցընողը կընայ ըսել թէ իր տղան կըսիրէ , տղուն բարին կուզէ : Եւ . ատիկայ սիրել չէ , այլ ողջ ողջ սպաննել է տղան . տարբերութիւնը աս է , որ թրով մէկէն սպաննելու տեղը՝ մոլուութեանց թոյնը իրենց ձեռքովը կըխմցընեն տղուն ու կըմեռցընեն : Ուրեմն այսպիսի ծնողք խիստ մեծ սուտ կըսեն թէ կըսիրեն իրենց տղաքը :

Եւանք ուրիշ աւելի խելքով սիրողները դիտենք : Եւան ոմանք որ առջիններէն աւելի խոհեմ գտնուելով , գլխաւոր հոգերնին ան է որ տղուն ճանչցընեն իր ստեղծողը , քրիստոնէական սկզբունքներ սորվեցընեն , ամէն օր պէտք եղած աղօթքը ընել տան . բայց ուրիշ կողմանէ ալ տղուն երես տալէն չեն դադրիր . ամէն անգամուն որ տղան կուլայ կըտրտնջայ՝ կըջանան հանգարտեցընել , անոր կամքը կատարելով . կըճանչնան որ տղան գէշ կըվարժի , կանպիտանանայ , բայց ինչ ընենք՝ տղայ է , խեղճ է կըսեն . իրաւ , պէտք չէ այնպէս վարժի , բայց հոգ չէ , սիրտը բարի է , չարութիւն չէ ըրածները , բնութիւնը քիչ մը սաստիկ է , ինչ ընենք . առիթ պէտք չէ

տալ, կամքին դէմ բան պէտք չէ ընել կրտսն . իրեն երեսին ալ կըզուրցեն թէ նայէ որդի՝ որ դուն աղէկ ըլլաս, հոգ մըներ, մի նեղանար, բան մը կուզես նէ՝ ըսէ . թէ որ կամքիդ դէմ ըրին՝ հանդարտ եղիր, մենք անոնց կըհասկըցընենք, և այլն: Եսոնք ալ թէպէտ առջիններէն խոհեմ կերևան, բայց աս կերպով ինչ օգուտ կընեն, եթէ ոչ ինքնահաւան մեծցընել իրենց տղան, որ ամէն իր ուզածը կատարելէն վերջը՝ կըպարծի ալ ուրիշներու առջև: Եսպիսիներուն ծնողքն ալ դեռ պէտք է սորվին թէ ինչպէս կըլլայ ճշմարտութեամբ տղան սիրելը ու երջանիկ ընելը:

Տեսնենք հիմա մնացած երրորդ տեսակ ծնողաց ըրածը, որ կըպարծին թէ իրենք ճշմարիտ սիրով կըսիրեն իրենց տղաքը առանց երես տալու և առանց գգուելու: Եսոնք իրենց տղաքը կըթել ուզելով, սրտերնին կամըցընեն, բնական սիրոյ օրէնքը ոտքի տակ կառնեն, իրենց տղոցը հետ ամենեւին անուշութեամբ չեն խօսիր, զիրենք շատ քովերնին չեն հանդիպցըներ. պզտիկ պակսութեան մը մէջ ալ թէ որ իյնան՝ մէկէն կըբարկանան, շատ անգամ ալ կըծեծեն . ասանկով կըսորվեցընեն տղոցը զիրար ատել, ձեռքերնէն եկած չարիքը ուրիշի ընել, գազանի բարք ունենալ, մարդու հետ անբանի պէս վարուիլ: Եսոնք կուզեն որ տղաքը իրենց առջին արձանի պէս կենան ոտքի վրայ, գլուխնին կախած, ձեռք ձեռքի վրայ բռնած . չխօսին, չխընտան, չհարցընեն, տեղերնէն չջարժին: Եսպիսի ծնողաց մէկուն հետ տղոց կըթուէ վրայ խօսելու ատենս՝ սկսաւ պարծիլ ու ըսել թէ՝ «Ես խիստ

« կըսիրեմ իմ որդիքս, անոնք ալ զիս  
 « շատ կըսիրեն . առջևս հարսի պէս  
 « կըկենան . անանկ կըթերեմ զանոնք  
 « որ երես ելլել ինչ ըսել է՝ չեն գիտեր .  
 « ես դունէն ներս մտածիս պէս  
 « ամէնքը ձայներնին վար կըբաշեն՝  
 « մէկդի կերթան . առջևս երևնա-

լու ալ չեն համարձակիր . երբոր  
 « ես կանչեմ, ան ատեն կուգան առ-  
 « ջևնին նայելով, բարե բռնած,  
 « խելօք ու հանդարտ . աւելորդ խօսք  
 « մը ամենեւին չեն համարձակիր ըսելու .  
 « հազիւ թէ հարցուցածիս պա-  
 « տասխան կուտան . իմ դիմացս ոչ երբ  
 « բէք թող կուտամ որ նստին » . . .  
 « Երբոր ան բարեսիրտ հայրը դեռ  
 « կուզէր պարծիլ առջևս թէ Եստու-  
 « ծոյ բանաւոր արարածները ինչպէս  
 « աղէկ կըկրթէ անբանութեան մէջ,  
 « սրտիս նեղութենէն չդիմացայ, խօս-  
 « քը կըտրեցի, « Պարոն, ըսի, աս  
 « գիտցիր որ ոչ քու տղաքդ զքեզ կը-  
 « սիրեն, և ոչ հրամանքդ գիտես թէ  
 « ինչ ըսել է որդի սիրել: ( ) Երինակ  
 « ըլլայ ան տղան որ այդպիսի հայր  
 « մը ունէր, ու նոր վախճաներ էր  
 « հայրը . ես չէի ուզէր հարցընել  
 « որ տղուն սիրտը չեղէ, ինքը յան-  
 « կարծ ինքիրմէ խնտալով ըսաւ .  
 « հայրս վախճանեցաւ, մենք ալ ձեռ-  
 « քէն ազատեցանք: Եսեցի աս խօս-  
 « քը, տեսայ ըսելուն կերպը, ապշե-  
 « ցայ մնացի . մտքէս ըսի թէ տես որ  
 « մարդս սխալ ճամբով ինչ աստի-  
 « ճան խեղճութե կըհասնի: Եթէ  
 « որդիք իրենց ծնողացը հետ ասանկ  
 « ատելութեամբ մեծնան, ուրիշ ըն-  
 « տանեաց՝ ևս առաւել ազգայնոց  
 « և օտարաց ինչ չեն ըներ . այսպիսի  
 « տղաքը հարկաւ կըլլան ապուշ,  
 « մարդատեաց, չար, ու անգութ: »

Հիմա իմացուցաւ որ աս իրեք տեսակ ծնողք ալ թէպէտ հասկըցեր են թէ տղայ կըթելը՝ զանոնք սիրելով ու անոնց բարիքն ուզելով կըլլայ, բայց սիրելուն կերպը ասոնցմէ մէկն ալ չգիտեր: Երեմն ճշմարիտ է ըսածնիս թէ ծնողք են պատճառ ժողովրդոց թշուառութեանը՝ սիրելու ճամբան չգիտնալով, և բարեբաղդութեանը՝ երբոր ճշմարտութեամբ սիրել գիտնան իրենց որդիքը . իսկ թէ ասոր ալ ճամբան որն է՝ յաջորդ թերթին մէջ կըխօսինք: